ՃՂԶ.

Փոթորկալից օրուան մը նկարագրութիւնը կը պատմուի Մելգոնեան Աբբահօր կողմանէ։

Վերապատուելի տեառն Հ. Միքայել վրդ.ին ողջոյն սիրոյ ի Քրիստոս

... տունն պատուայու գեղին լինի յաւուրս յայսոսիկ...։ Ի Վէնէտիկ յաւուրս յայսոսիկ եղև կարկուտ մեծ և էհար ի ծովու եղեալ կղզիս, և զլիտօն և զմալամոք ևն, որպէս և զմեր պարտէզն. և աւելի քան զկէսն խաղողոյն ապականեաց։ Ցետ քանի մի աւուր եղև փոթորիկ զարհուրելի ի թերաֆէրմայն սկսեալ ի մեստրայու կողմանց և գնացեալ մինչ ի պատուայ և յայլ տեղիս, և կործանեաց զբազում վանորայս եկեղեցիս տունս. և խլեաց զբազում ծառս մեծամեծս յարմատոյ և տարեալ ընկէց յայլ ուր, յորոց բազումք ևս ոչ գտան. ի պատուայ ինքս մեծ եղև, զի կործանեցան ոմանք չինուածք. և գրեթէ ամենայն տունք վիրաւորեցան. և այն մեծ սալօնն պատուայ կործանեցաւ յերկիր, և ի տեղիս տեղիս բազումք մեռան ընդ փլատակաւ աւելի քան զհինգ հարիւր։ Բայց տեառն ողորմութեամբ ի Վէնէտի[կ] ոչ եղև զգացեալ այն փոթորիկն։ Ի Նովենթայ մի պարիսպն պարտիզի տան մերոյ կործանեցաւ, ոմանք ծառք կոտորեցան. և ամենայն պտուղք թօթափեցան. այս ստոյգ է, զի ուժգնութիւն փոթորկին անդ ոչ է եղեալ, ապա թէ ոչ զբոլոր տուն մեր յօդս վերացուցանէր, քանզի փթած էր։...

1756 *յօգոստ.* 25 — *Նուաստ ծառայ*

[*ի Վենետիկ*] — *Ստեփաննոս վրդ.* [*Աբբահայր*]

ՃՂԷ.

Անծանօթ չէ Հայ Մատենագրութեան առջև Նալեան Պատրիարքի հրատարակած «Գրքուկս կոչեցեալ ձրագ ճշմարտութեան» անուն գիրքը, որոյ մէկ քանի գլուխները՝ ընդդէմ Հիմնադրիս ուղղուած են, ու մեծ մասը՝ Ցիսուսեան Մօնֆորթ քահանային դէմ, պաշտպանելնուն համար մէկ տեսակաւ հաղորդուելու տեսակէտը։

Փութանք ըսելու, որ ներկայ նամակագրին վաւերագրէն զատ, սոյն գրքին շուրջ ակնարկութիւններ կը գտնենք Նուրտիկեանի[1] *քովն ալ։ Նալեանի վերջին հիւանդութեան ծանր պահերուն Սարգ. Աբքեպս. Սարաֆեան ստէպ այցելութեան երթալով յորդորած է զանիկա՝ ճանչնալու ըրած սխալը նկատմամբ հրատարակած մատեանին, որ անտարակոյս Մխիթարայ դէմ եղածն էր. — ահա՛ ակնարկութիւնները.*

Որ և անդէն ի մէջ բերէր
Մատեանս նորին՝ զոր արպեալն էր
Ընդդէմ ուղղոց որ արժան չէր,
Ընդ որս ինքն իսկ զաղտ անհամ էր։

Որպէս յայտ է անձանց ոմանց
Թէ նա զայս բանս ոչ շարադրեաց
Ընդդէմ բանից ուղղափառաց
Բայց թէ հաճիլ Հայոց բազմաց։

Ա՛ս այս ցակոր տայր պատասխան
Թէ տպեալ եմ արդ մի մատեան,
Ժամամբքից՝ աղօթից բան,
Ցոր ուղղափառ բազում բանք կան։

Որում Սարգիս կրկնէր անդէն,
Թէ կամքդ յայնմիկ նոյնպէս արդ չէն,
Որպէս ի միւս զրեանսդ յայտ են,
Ցորս անպատեհք յոգնաթիւ են։

Այլ տեսեալ թէ ունչս առնելով,
Զիւր վերջին գիրք բաւ թուելով,
Պատասխանէր պատճառելով,
Սարգիս լռէր հառաչելով։

1. Գալեմք. «Կենս. Սարգ. Աբք. Սարաֆեան», էջ 105–106։